

ՀՀ ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ
ԵՊՀ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ

Թիվ 1 (86)

2020 թ.

Գլխավոր խմբագիր՝
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
ի.գ.դ., պրոֆ. Գագիկ Ղազինյան

Խ մ ք ա գ ր ա կ ա ն խ ո ղ ր ի ու լ ը

Սամվել Դիլբանդյան - ի.գ.դ.

գլխավոր խմբագրի տեղակալ

Կարեն Գևորգյան - ի.գ.թ

գլխավոր խմբագրի տեղակալ

Աշոտ Պետրոսյան -

պատասխանատու քարտուղար

Գևորգ Դանիելյան - ի.գ.դ.

Նիկոլայ Ստոյկո - ի.գ.դ.

Հարություն Խաչիկյան - ի.գ.դ.

Արմեն Հայկյանց - ի.գ.դ.

Ղավիթ Ավետիսյան - ի.գ.թ.

Արթուր Վաղարշյան - ի.գ.դ.

Սերգեյ Առաքելյան - ի.գ.դ.

Վահե Հովհաննիսյան - ի.գ.դ.

Տարոն Սիմոնյան - ի.գ.թ.

Հիմնադիր և հրատարակիչ՝
ՀՀ իրավաբանների միություն,
ԵՊՀ իրավագիտության
ֆակուլտետ

Խմբագրության հասցեն՝

ՀՀ, 0025 Երևան,

Ալեք Մանուկյան 1, ԵՊՀ

իրավագիտության ֆակուլտետ:

Հեռ. 060-71-02-47

Էլ. կայք՝

[http://ysu.am/faculties/hy/Law/
section/structure/amb/48439](http://ysu.am/faculties/hy/Law/section/structure/amb/48439)

Խմբագրությունը կարող է

հրապարակել նյութեր՝ համամիտ

չլինելով հեղինակների

տեսակետներին:

12 համակարգչային էջից ավելի

չպատվիրված նյութերը չեն

ընդունվում:

e-mail: a_petrosyan@ysu.am

Ղախիչ՝ 77771

Տպագրական 8 մամուլ

Գրանցման թիվը՝ 798

Տպաքանակը՝ 500

Գինը՝ պայմանագրային

Հանձնված է շարվածքի

24.12.2019

Հանձնված է տպագրության

15.05.2020

С О Ю З Ю Р И С Т О В Р А
Ю Р И Д И Ч Е С К И Й Ф А К У Л Ь Т Е Т Е Г У

ГОСУДАРСТВО И ПРАВО

Номер 1 (86)
2020 г.

Главный редактор:
академик НАН РА,
д.ю.н., проф. Гагик Казинян

Учредитель и издатель:
Союз Юристов РА,
Юридический факультет ЕГУ

Редакционный совет

Самвел Дилбандян - д.ю.н.

зам. главного редактора

Карен Геворгян - к.ю.н.

зам. главного редактора

Ашот Петросян -

ответственный секретарь

Геворг Даниелян - д.ю.н.

Арутюн Хачикян - д.ю.н.

Николай Стойко - д.ю.н.

Армен Айкянц - д.ю.н.

Давид Аветисян - к.ю.н.

Артур Вагаршян - д.ю.н.

Сергей Аракелян - д.ю.н.

Ваге Оганнесян - д.ю.н.

Тарон Симонян - к.ю.н.

Адрес редакции:
РА, 0025 Ереван,
ул. Алека Манукяна 1,
юридический факультет ЕГУ.
Тел.: 060-71-02-47
e-mail: a_petrosyan@ysu.am
web: [http://ysu.am/faculties/hy/Law/
section/structure/amb/48439](http://ysu.am/faculties/hy/Law/section/structure/amb/48439)

8 усл. печ. л.
Тираж: 500
Сдано в набор 24.12.2019
Подписано к печати 15.05.2020

ՎԿԱՅԻ՝ ՑՈՒՑՄՈՒՆՔ ՏԱԼՈՒՑ ԱԶԱՏՎԱԾ ԼԻՆԵՆՈՒ ՀԱՅԵՑՈՂՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հովսեփ Բեդկյան

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի նախագահ

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 65-րդ հոդվածը սահմանում է ցուցմունք տալու պարտականությունից ազատվելու իրավունքը, համաձայն որի՝ ոչ ոք պարտավոր չէ ցուցմունք տալ իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների վերաբերյալ, եթե ողջամտորեն ենթադրելի է, որ այն հետագայում կարող է օգտագործվել իր կամ նրանց դեմ: Օրենքը սահմանում է ցուցմունք տալու պարտականությունից ազատվելու այլ դեպքեր:

Վկայի իմունիտետի ինստիտուտն ամրագրված էր նաև 2005 թվականի խմբագրությամբ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 22-րդ հոդվածում այն բովանդակությամբ, որ ոչ ոք պարտավոր չէ ցուցմունք տալ իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների վերաբերյալ: Օրենքը կարող է նախատեսել ցուցմունք տալու պարտականությունից ազատվելու այլ դեպքեր:

Սահմանադրության 65-րդ հոդվածի առաջին նախադասությունը հիմնվում է 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 22-րդ հոդվածի 1-ին մասի վրա, այն տարբերությամբ, որ 65-րդ հոդվածը սահմանափակում է ցուցմունք չտալու իրավունքը միայն այն դեպքերով, եթե ողջամտորեն ենթադրելի է, որ այն հետագայում կարող է օգտագործվել իր կամ նրանց դեմ: Առաջին հայացքից 2015թ. խմբագրությամբ Սահմանադրության 65-րդ հոդվածի կարգավորումները կարող են հետընթաց դիտվել, եթե այս իրավունքին մոտենանք միայն ցուցմունք տվողի շահերի տեսանկյունից, սակայն իրականում դա վարույթում այլոց իրավունքների և օրինական շահերի հավասարակշռված պաշտպանությանն ուղղված կարգավորում է:

Պետք է նշել, որ «ցուցմունք տալու պարտականությունից ազատված լինելը» համընդհանուր ճանաչում ստացած սկզբունք է: Այն ամրագրված է «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 14-րդ հոդվածի 3-րդ մասի «է» կետում¹, որի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք իրեն ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի քննության ժամանակ ունի առնվազն հետևյալ երաշխիքների իրավունքը՝ լիակատար հավասարության հիման վրա:

է) պարտադրված չլինել իր դեմ ցուցմունքներ տալու կամ իրեն մեղավոր ճանաչելու»: Այս սկզբունքը թեև ուղղակի ամրագրված չէ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայում, սակայն Եվրոպական դատարանն իր բազմաթիվ նախադեպային որոշումներում այն քննարկել է 6-րդ հոդվածի շրջանակներում որպես արդար դատական քննության իրավունքի տարր²:

Նշված իրավունքների հռչակումը նպատակ է հետապնդում ապահովելու մեղադրյալի իրավունքների պաշտպանությունն իշխանության չարաշահումներից և

¹ Ընդունվել է 16 դեկտեմբերի 1966 թվականին:

² St' u Eur. Court H. R. Funke v France (1993 թ.), Judgement of 25.02.1993. Series A. No. 256-A; Saunders v the United Kingdom, Judgement of 17.12.1996թ., Reports. 1996-VI. Para. 68, H. R. Saunders v. the United Kingdom United Kingdom, Judgement of 17.12.1996թ., Reports. 1996-VI, Serves v. France, Judgement of 20.10.1997, Reports. 1997-VI, Quinn v. Ireland, Judgement of 21.12.2000

հասնելու այն նպատակներին, որոնք դրված են 6-րդ հոդվածի հիմքում:

Սահմանադրական այս սկզբունքից հետևում է, որ անձն իրավունք ունի ցուցմունք չտալ՝

ա/ իր դեմ, այսինքն՝ ինքն իրեն չմերկացնել իրավախախտման մեջ,

բ/ երկրորդ՝ ցուցմունք չտալ անուսնու և մերձավոր ազգականների դեմ:

Երկրորդ դեպքում խնդիրն ավելի բարոյահոգեբանական է, և օրենսդրի նպատակն է հանրային շահերից վեր դասել անձնական և ընտանեկան հարաբերությունները և բացառել նշված անձնաց միմյանց դեմ հարկադրաբար ցուցմունք տալը: Մերձավոր ազգականի դեմ ցուցմունք չտալը նպատակ է հետապնդում պաշտպանելու ներընտանեկան արժեքները, քանի որ ընտանիքի անդամները, միմյանց դեմ ցուցմունք տալով, կարող են էական վնաս հասցնել ընտանեկան հարաբերություններին: Պետությունը պարտավոր է նպաստել ընտանեկան հարաբերությունների պահպանմանը և չստեղծել խոչընդոտներ դրանց արդյունավետ գործունեության համար¹:

Սահմանադրական այս սկզբունքը որոշ փոփոխություններով տեղայնացված է վարչական դատավարությունում և այնտեղ գործում է որպես ինքնուրույն սկզբունք:

Այս սկզբունքի կիրառման հարցերը քննարկելիս հարկ է առաջնահերթ վերլուծության ենթարկել վկայի կողմից ցուցմունք տալու պարտականության ծագման, տեղեկություններ հաղորդելու ձևի և բովանդակության իրավաչափության սուբյեկտային, օբյեկտային և ձևական պայմանների ապահովման հետ կապված հարցերը, որպիսի պայմաններում հնարավոր կլինի միայն լիարժեքորեն բացահայտել վկայի իմունիտետի ինստիտուցիոնալ տարրերն ու կիրառման առանձնահատկությունները:

Վկայի ցուցմունքը՝ որպես ապացույցի ինքնուրույն տեսակ, դատավարական օրենսդրությամբ կանոնակարգված, կոնկրետ դատավարական ձևով գոյություն ունեցող տեղեկություն(ներ) է (փաստական տվյալներ), որը հնարավորություն է տալիս գործը քննող վարչական դատարանին պատշաճ կերպով վերականգնել և որոշել հանրային իրավունքի վեճի հետ կապված բոլոր հանգամանքները²:

Իրավաբանական գրականության մեջ գերիշխում է այն մոտեցումը, որ վկայի ցուցմունքը որպես ապացույց է հանդես գալիս փաստերի, փաստական տվյալների, գործի հանգամանքների ապացուցման միջոցներ միասնության ձևով: Ընդ որում, Ե. Վ. Դոդինի դիրքորոշման համաձայն՝ վարչական դատավարությունում օգտագործված ապացույցները, այդ թվում՝ վկայի ցուցմունքերն իրավական բնույթ են կրում: Դա իր հերթին նշանակում է, որ վարչական դատավարությունում ապացույց կարող են հանդիսանալ միայն այն տվյալները, որոնք՝ 1. ստացված են օրենքով սահմանված կարգով, 2. եթե օրենքը թույլ է տալիս դրանց օգտագործումը որպես այդպիսին, 3. որոնք նշանակություն ունեն տվյալ գործի բազմակողմանի, օբյեկտիվ և ճիշտ քննության համար³:

Ինչպես տեսնում ենք, վարչական դատավարությունում վկայի ցուցմունքը համարվում է ապացույցի առանձին տեսակ: Իսկ իրավաբանական տեսության մեջ վկան բնութագրվում է որպես ապացուցողական տվյալների ստացման աղբյուր, գործի ելքում իրավաբանական շահագրգռվածություն չունեցող ֆիզիկական անձ, որը կանչվում է դատարան՝ գործի քննության և լուծման համար նշանակություն ու-

¹ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ» / ընդհանուր խմբագրությամբ Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի, Եր., 2010, էջ 260-261:

² Տե՛ս **Комзюк А.Т., Бевзенко В.М., Мельник Р.С.** Адміністративний процес України: Навч. посіб. – К.: Прецедент, 2007. – էջ 280, **Додин Е.В.** Доказательства в административном процессе. – М.: Юрид. лит., 1973, էջ 45: **Коломоєць Т.О.** Адміністративне судочинство: Підруч. – К.: Істина, 2009, – էջ 118:

³ Տե՛ս **Додин Е.В.**, նշվ. աշխ., էջ 47:

նեցող փաստերի մասին իր կողմից անմիջականորեն ընկալված կամ այլ անձանց կողմից իրեն հաղորդված տեղեկությունները դատարանին հայտնելու համար:

Հարկ է նշել նաև, որ վկան կրում է պարտականություն՝ ներկայանալու դատարան և ճիշտ ցուցմունք տալու, ինչը ամրագրված է վարչական դատավարության օրենսգրքի 34-րդ հոդվածով: Օրենսգրքը նախատեսել է նաև այդ պարտականությունից բացառություն՝ հիմք ընդունելով վկայի անձեռնմխելության (իմունիտետի) սահմանադրական սկզբունքը:

Վկայի իմունիտետի ինստիտուտի սահմանումը պայմանավորված է ոչ միայն էթիկական և բարոյական տեսանկյունից վկային ցուցմունք տալու պարտականությունից ազատելու, այլ նաև սուտ ցուցմունքներ տալու դեպքերի նախականիման նպատակամղվածությամբ¹:

Այսպես, վարչական դատավարության օրենսգրքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ դատարանում որպես վկա հանդես գալիս առանձին հարցի վերաբերյալ ցուցմունք տալուց հրաժարվելու իրավունք ունեն անձինք՝ իրենց կամ իրենց ամուսնու կամ իրենց հետ արյունակցական մինչև 2-րդ աստիճանի կապի մեջ գտնվող անձանց կամ որդեգրողների կամ իրենց որդեգրածների կամ որդեգրողների կամ իրենց որդեգրածների հետ արյունակցական կապի 1-ին աստիճանի մեջ գտնվող անձանց վերաբերյալ, եթե ողջամտորեն ենթադրում է, որ այն հետագայում կարող է օգտագործվել իր կամ նրանց դեմ:

Անձի ցուցմունք տալու պարտականությունից ազատելու սկզբունքը լայնորեն կիրառելի է նաև այլ երկրների վարչական դատավարություններում. օրինակ՝ Ռուսաստանի Դաշնության գործող վարչական դատավարության օրենսգրքի² համաձայն՝ որպես վկա ցուցմունք տալուց հրաժարվելու իրավունք ունեն՝ 1. անձն իր դեմ, 2. անուսինն ամուսնու դեմ, երեխաները, այդ թվում՝ որդեգրվածներն իրենց ծնողների, որդեգրողների դեմ, և ծնողներն իրենց երեխաների, այդ թվում՝ որդեգրվածների դեմ, 3. հարազատ կամ համահայր կամ համամայր եղբայները, քույրերը միմյանց դեմ, տատը, պապը թոռների դեմ և թոռները պապի և տատի դեմ, 4. խնամակալը կամ հոգաբարձուն այն անձանց դեմ, որոնց նկատմամբ նշանակվել է խնամակալություն կամ հոգաբարձություն:

Ուկրաինայի վարչական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածը սահմանում է ցուցմունք տալուց հրաժարվելու իրավունք ունեն անձն իր դեմ, ընտանիքի անդամները կամ մոտ ազգականները (ամուսիններ, հայր, մայր, խորթ հայր, խորթ մայր, երեխաներ, խորթ երեխաներ, քույր, եղբայր, տատ, պապ, թոռ, որդեգրված և որդեգրող, խնամակալ կամ հոգաբարձու, անձ որի նկատմամբ նշանակվել է խնամակալություն կամ հոգաբարձություն, վերոնշյալների ընտանիքի անդամ կամ մոտ հարազատ):

Վրաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով նշված հարցը կարգավորված չէ, սակայն վարչական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարչական դատավարությունում կիրառվում են Վրաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի դրույթները, եթե նույն օրենսգրքով այլ բան նախատեսված չէ: Վրաստանի քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ «Վկայի ցուցմունքներ» գլխի 142-րդ հոդվածի համաձայն՝

1. Վկայություն տալուց հրաժարվելու իրավունք ունեն. ա) կողմերի ամուսինները. բ) հարազատները՝ երեխաները, թոռները, եղբայրները, քույրերը, ծնողները, որդեգրողները, որդեգրված երեխաները, խնամակալները, հոգաբարձուները, տատիկերը, պապիկները, գ) այն անձինք, ովքեր իրենց պաշտոնական դիրքի շնորհիվ

¹ St`u Молчанов В.В. Свидетельский иммунитет в гражданском процессуальном праве //Правоведение. 2006. No 2, էջ 109:

² St`u 51-րդ հոդվածի 11-րդ մասը:

պարտավոր են պահպանել գաղտնիքները, եթե նրանք ազատված չեն այդ պարտականությունից:

2. Վկայություն տալուց հրաժարվելը թույլատրվում է, եթե վկայություն տալը կհանգեցնի վկայի կամ նրա մերձավոր ազգականի նկատմամբ քրեական հետապնդման կամ նրանց կպատճառի գույքային վնաս:

Նույն օրենսգրքի 143-րդ հոդվածի համաձայն՝ անկախ ցուցմունքից հրաժարվելու իրավունք ունենալուց, անձը պարտավոր է վկայություն տալ, եթե՝ ա) անհրաժեշտ է հաստատել այն գործարքը, որը կնքելու համար հրավիրվել է որպես վկա. բ) պետք է հստակեցվի ընտանիքի անդամի ծննդյան, ամուսնության կամ մահվան հարցերը. գ) որոշակի իրավական հարաբերություններ հաստատելիս նա հանդես է գալիս որպես կողմերից մեկի ներկայացուցիչ:

Նույն օրենսգրքի 144-րդ հոդվածի համաձայն՝ վկան, որը հրաժարվում է ցուցմունք տալուց, պետք է հիմնավորի այդ մերժումը: Ղատարանն է ի վերջո որոշում՝ վկան ցուցմունք տալուց հրաժարվելու իրավունք ունի՞, թե՞ ոչ:

Փաստորեն, ինչպես տեսնում ենք, ի տարբերություն մյուս երկների՝ Վրաստանի Հանրապետության օրենսդրությունում անձի ցուցմունք տալու պարտականությունից ազատելու սկզբունքը գործում է որոշակի վերապահումով, այսինքն՝ ոչ թե անձն է որոշում օգտվել իր այդ իրավունքից, այլ դատարանը, որը կարող է սահմանափակել այդ իրավունքը և պարտադրել, որ անձը տա ցուցմունք: Իրավաբանական տեսության մեջ նույնպես կան հեղինակներ, որոնք համարում են, որ անձի լռելու իրավունքի հարցը պետք է որոշի վարույթն իրականացնող մարմինը¹:

Նշված մոտեցումը, կարծում ենք, ճիշտ չէ և խաթարում է անձի ցուցմունք տալու պարտականությունից ազատելու համընդհանուր սկզբունքը: Վարչական դատավարության օրենսդրությամբ վկայի լռելու իրավունքի վերաբերյալ սահմանված սկզբունքի տրամաբանությունը հանգում է նրան, որ իր, ամուսնու կամ մերձավոր ազգականի վերաբերյալ ցուցմունք տալուց հրաժարվելու իրավունքի սահմանները, այսինքն՝ այն հարցերի շրջանակը, որոնց չպատասխանելու իրավունք ունի, պետք է որոշի ինքը՝ վկան, այլ ոչ թե դատարանը: Ցուցմունք տալու պարտականությունից ազատ լինելը պետք է գնահատել որպես անձի սուբյեկտիվ իրավունք, որի իրականացումը թողնված է նրա հայեցողությանը: Նշված իրավունքի առկայությունը բացառում է անձին ցուցմունք տալ պարտավորեցնելը:

Վարչական դատավարության օրենսգիրքը հստակ կարգավորում է, թե՛ ապացույցների տեսակներին և թե՛ ապացուցման գործընթացին վերաբերող հարցերը: Ղա նշանակում է, որ ցանկացած այլ աղբյուր, որտեղից կհավաքվի դատարանի համար անհրաժեշտ տեղեկատվությունը, ինչպես նաև օրենքով չկարգավորված եղանակներով հավաքված ինֆորմացիան չեն կարող օգտագործվել ապացուցման ընթացքում:

Մեր կարծիքով, խնդրո առարկայի լիարժեք բացահայտման տեսանկյունից կարևոր է նաև վկայի ինուսիտետով օժտված անձանց կողմից ցուցմունք տալու պարագայում ապացույցների տրամաբանական և իրավաբանական որակման՝ դրանց վերաբերելիության, թույլատրելիության, արժանահավատության և բավարարության տեսանկյունից գնահատման հարցի պարզաբանումը, ինչը անհրաժեշտ պայմաններ կստեղծի գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստական հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը հաստատելու, ինչպես նաև փաստական տվյալների համակցության բավարարությունը պարզելու համար: Ընդ որում, նման դեպքերում թե՛ պրակտիկ, թե՛ տեսական առումներով որպես հիմնական թերություն կամ ռիսկ դիտարկվում է այս կարգով ձեռք բերված ապացույցների արժանահավատության աստիճանը:

¹Տե՛ս **Գ. Ղազինյան**, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի 2018 թ. հունիսի 25-ի նիստի արձանագրությունը:

«Հ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը, անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանը դատական ակտի մեջ պետք է պատճառաբանի նման համոզմունքի ձևավորումը:

«Հ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով ապացույցների արժանահավատության հարցին, իր որոշումներից մեկում արձանագրել է, որ դատարանը յուրաքանչյուր ապացույցի վերաբերելիությունը և թույլատրելիությունը ստուգելուց հետո պարտավոր է ստուգել նաև տվյալ ապացույցի արժանահավատությունը և ապացույցների միջև հակասության դեպքում մերժել իր կարծիքով ոչ արժանահավատ ապացույցը՝ հիմնավորելով տվյալ մերժումը, իսկ փաստը հաստատել արժանահավատ ապացույցի հիման վրա¹:

Իր մեկ այլ որոշմամբ «Հ վճռաբեկ դատարանը նշել է, որ ապացույցների արժանահավատությունն ապացույցի հատկանիշ է, որը բնութագրում է ապացույցման առարկան կազմող հանգամանքների հավաստիությունն ու հստակությունը: Արժանահավատ է այն ապացույցը, որը գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների վերաբերյալ հավաստի տեղեկություն է բովանդակում: Ապացույցի արժանահավատության ստուգման և գնահատման չափորոշիչները տարբեր են՝ պայմանավորված հետազոտված ապացույցի տեսակով: Մասնավորապես՝ եթե վկայի ցուցմունքը գնահատելիս դատարանը նախևառաջ պետք է հաշվի առնի վկայի անձնական հատկանիշները (ունա՞կ է արդյոք նա ընկալել և վերարտադրել համապատասխան փաստը, ի՞նչ փոխհարաբերությունների մեջ է գործին մասնակցող անձանց հետ և այլն), ապա գրավոր ապացույցների պարագայում դատարանը նախևառաջ պետք է պարզի այդ ապացույցի համապատասխանությունը տվյալ տեսակի փաստաթղթերին ներկայացվող պահանջներին²:

Վերոգրյալ իրավական դիրքորոշումները հաշվի առնելով՝ կարելի է արձանագրել, որ գործի ճիշտ լուծման նպատակով դատարանը պարտավոր է ստուգել ապացույցների արժանահավատությունը, և առանց ապացույցների արժանահավատության ստուգման հնարավոր չէ հաստատելու կամ հերքելու գործի լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքները: Իսկ եթե դատարանի մոտ կասկածներ են առաջանում՝ կապված ձեռք բերված և հետազոտվող ապացույցների հավաստիության վերաբերյալ, ապա դրանք անհրաժեշտ է փարատել տվյալ ապացույցներն այլ ապացույցների հետ համադրելու միջոցով: Այսինքն՝ ապացույցների արժանահավատությունը կախված է նաև գործով ձեռք բերված այլ ապացույցների միմյանց համապատասխանությունից, հավաքված և հետազոտված բոլոր ապացույցների ընդհանուր գնահատականից, քանի որ գործով ձեռք բերված և հետազոտված բոլոր ապացույցների գնահատումը միայն կարող է վեր հանել ապացույցների միջև եղած հակասությունները և արդյունքում որոշել ապացույցների հավաստիությունը:

Ապացույցների ոչ հավաստի լինելու մասին կարող է գնահատական տրվել այն դեպքում, եթե միևնույն հանգամանքի կամ փաստի վերաբերյալ ստացվել են հակասական, միմյանց բացառող տեղեկություններ կամ տվյալներ: Ապացույցի հավաստիության մասին կարելի է դատել՝ առաջին հերթին ելնելով այդ տեղեկատվության աղբյուրի բնույթից (հատկանիշներից), այսինքն՝ ապացույցների արժանահավատ-

¹ Տե՛ս «Հ գլխավոր դատախազությունն ընդդեմ «Ջարյա» արտադրական կոոպերատիվի թիվ 3-81 (ՏԴ) քաղաքացիական գործով «Հ վճռաբեկ դատարանի 29.02.2008 թվականի որոշումը:

² Տե՛ս Արմեն Կուրդինյանն ընդդեմ Սեդա Խուրշուդյանի թիվ ԵՇԴ/1342/02/11 քաղաքացիական գործով «Հ վճռաբեկ դատարանի 18.07.2014 թվականի որոշումը:

տությունն առաջին հերթին կախված է տեղեկատվության աղբյուրի որակից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով ամրագրված է վկայի հարաբերական անձեռնմխելիությունը, որի դեպքում ինունհիտետով օժտված վկան ինքն է որոշում՝ օգտվել ցուցմունք տալու ընթացքում որոշակի հարցերի պատասխանելուց հրաժարվելու իր իրավունքից, թե՛ ոչ, ինչը հիմնված է վերը նշված սահմանադրական սկզբունքի վրա:

Դատական պրակտիկայում հանդիպում են դեպքեր, երբ վկան տալիս է ցուցմունք, որը վերաբերում է իր կամ իր ամուսնու կամ իր հետ արյունակցական մինչև 2-րդ աստիճանի կապի մեջ գտնվող անձանց: Նման դեպքում դատարանը որևէ կերպ չի կարող մեկնաբանել այնպես, որ իր, ամուսնու կամ մերձավոր ազգականի վերաբերյալ վկայի տված ցուցմունքներն անպայմանորեն համարվում են անարժանահավատ ապացույցներ: Այլ կերպ ասած՝ վկայի կողմից տրված ցուցմունքներն ինքնըստինքյան չեն կարող դիտվել որպես ոչ արժանահավատ ապացույցներ միայն այն հիմքով, որ այդ ցուցմունքները վերաբերում են այդ վկային կամ նրա մերձավոր ազգականին: Հետևաբար, վկայի դատավարության մասնակիցների մերձավոր ազգականը լինելու հանգամանքն ինքնին չի կարող հիմք դառնալ վկայի տված ցուցմունքներն արժանահավատ ապացույց չհամարելու և գործով ձեռք բերված ապացույցների կազմից հանելու համար:

Վճռաբեկ դատարանը վերը նշված 27.11.2013թ. թիվ ՎԴ/10507/05/13 որոշմամբ արձանագրել է նաև, որ յուրաքանչյուր դեպքում վկայի ցուցմունքները գնահատելիս դատարանը պարտավոր է հաշվի առնել հետևյալ հատկանիշները.

- վկայի փոխհարաբերությունները գործին մասնակցող անձանց հետ,
- փաստերի մասին վկայի իրազեկության աղբյուրը,
- այն պայմանները, որոնց առկայությամբ վկան ընկալել է որոշակի փաստեր (այսինքն՝ տեղը, ժամանակը, անձի ֆիզիկական և հոգեկան վիճակը, տարիքը),
- վկայի սուբյեկտիվ հատկանիշներն այն առումով, թե նա իր ունակություններով ի վիճակի է արդյոք ճիշտ ընկալելու իրադարձություններն ու գործողությունները, ընկալածը պահելու հիշողության մեջ և ճիշտ վերարտադրելով՝ հաղորդելու դատարանին:

Նշված հատկանիշների վերհանումը դատարանին հնարավորություն է տալիս գնահատելու վկայի հայտնած տեղեկությունների հավաստիության աստիճանը:

Միևնույն ժամանակ, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 4-րդ մասի բովանդակությունից հետևում է, որ դատարանը, նախազգուշացնելով վկային սուտ ցուցմունք տալու կամ ցուցմունք տալուց հրաժարվելու համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին, կարող է ակնկալել, որ վկայի հայտնած տեղեկությունները արժանահավատ են, քանի դեռ հակառակը չի հիմնավորվել:

Ամփոփելով կարելի է հանգել այն եզրակացության, որ անձի ցուցմունք տալու պարտականությունից ազատ լինելու սահմանադրական սկզբունքն արտացոլված է վարչական դատավարությունում՝ որպես վկայի լռելու իրավունք: Այդ իրավունքի տրամաբանությունը հանգում է նրան, որ իր, ամուսնու կամ մերձավոր ազգականի վերաբերյալ ցուցմունք տալուց հրաժարվելու իրավունքի սահմանները, այսինքն՝ այն հարցերի շրջանակը, որոնց չպատասխանելու իրավունք ունի, պետք է որոշի ինքը՝ վկան, այլ ոչ թե դատարանը: Ցուցմունք տալու պարտականությունից ազատ լինելը անձի սուբյեկտիվ իրավունքն է, որի իրականացումը թողնված է նրա հայեցողությանը: Իրավակիրառ պրակտիկայում կարող են լինել դեպքեր, երբ վկան, ունենալով ինունհիտետ, որոշում է ցուցմունք տալ, այսինքն՝ պատասխանել այնպիսի հարցերի, որի փաստական տվյալները վերաբերում են իրեն կամ իր մերձավոր ազգականներին: Նման դեպքերում ինչպես ցանկացած ապացույցի, այպես էլ վկայի ցուցմունքի արժանահավատության վերաբերյալ վերջնական գնահատական պետք է տա դատարանը, որը պարտավոր է վկայի ցուցմունքները համադրել գոր-

ծով հավաքված այլ ապացույցների, այդ թվում՝ այլ անձանց ցուցմունքների հետ: Այլ կերպ ասած՝ եթե դատարանի մոտ կասկածներ են առաջանում՝ գործով հրավիրված վկաների ցուցմունքների հավաստիության ու արժանահավատության վերաբերյալ, ապա դրանք անհրաժեշտ է փարատել վկաների ցուցմունքներն այլ ապացույցների հետ համադրելու միջոցով՝ դատական ակտում պարտադիր պատճառաբանելով, թե ինչու են այս կամ այն ցուցմունքները դիտվել որպես ոչ արժանահավատ:

ПРОБЛЕМЫ УСМОТРЕНИЯ ОСВОБОЖДЕНИЯ ОТ ДАЧИ ПОКАЗАНИЯ СВИДЕТЕЛЕМ В АДМИНИСТРАТИВНОМ СУДОПРОИЗВОДСТВЕ

Овсеп Бедевян

Председатель Апелляционного административного суда РА

Конституционный принцип обязанности освобождения от дачи показания субъекта закреплен в административном судопроизводстве в качестве права молчания свидетеля. Логика данного права заключается в границах права отказаться от дачи показания по отдельным вопросам. Субъективное право отказа от дачи показания отнесено к усмотрению конкретного лица. В правоприменительной практике могут быть случаи, когда свидетель, наделенный иммунитетом, решает дать показания. В данном случае суд должен оценить правдоподобность конкретного показания в совокупности остальных относимых и допустимых доказательств.

ISSUES RELATED TO TESTIMONIAL IMMUNITY IN ADMINISTRATIVE PROCEEDINGS

Hovsep Bedevyan

Chairman of the Administrative court of appeal of the RA

The constitutional principle of the duty to exempt the subject from testimony is enshrined in administrative proceedings in the form of the right of the witness to be silent. The logic of this right suggests that the subject has the right to refuse to testify on specific issues. The subjective right related to the obligation to testify shall be applied at the discretion of the person. In law enforcement practice there may be cases where a witness with an immunity decides to testify. In this case, the court must assess the validity of the particular testimony in conjunction with other relevant and admissible evidence.

Բանալի բառեր – վկա, ցուցմունք, սկզբունք, իմունիտետ, ապացույց, արժանահավատություն

Ключевые слова – свидетель, показание, принцип, иммунитет, доказательство, правдоподобность

Key words – witness, testimony, principle, immunity, evidence, validity